


Գյուղատնտեսությունում մոլախոտերի և այլ  
վնասատուների դեմ պայքարելու նպատակով  
օգտագործվող թունաֆիմիկատները

**Use of chemicals to fight weed and pests  
in the agriculture**





Երևան, 2022

Գյուղատնտեսությունում մոլախոտերի և այլ վնասատուների դեմ պայքարելու նպատակով օգտագործվող թունաքիմիկատները

**Հետազոտություն  
Բովանդակություն**

<b>Ներածություն.....</b>	<b>24</b>
<b>Մեթոդաբանություն .....</b>	<b>2</b>
<b>Ուսումնասիրություն .....</b>	<b>3</b>
<b>Ընդհանուր իրավիճակ.....</b>	<b>16</b>
<b>Հիմնական բացահայտումներ.....</b>	<b>17</b>
<b>Առաջարկություններ .....</b>	<b>.....</b>

**Հայաստանի Հանրապետություն**

**Սոցիոլոգ՝ Մարգարիտ Խաչատրյան**

**Ազգային փորձագետ՝ Տիրուհի Նազարեթյան  
Միջազգային փորձագետ՝ Վասիլե Զիոարիկ**

## Ներածություն

2021թ-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում Ազրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից իրականացվել է սոցիոլոգիական ուսումնասիրություն, որի նպատակն էր պարզել մոլախոտերի դեմ պայքարի համար կիրառվող ազրոքիմիկատների օգտագործման ցուցանիշները, մասնավորապես, տեսակներն ըստ անվանումների, ձեռքբերման աղբյուրները, ինչպես նաև դրանց օգտագործման ընթացքում պաշտպանիչ միջոցների և ցուցումների կիրառումը: Ուսումնասիրությունն իրականացվել է գյուղատնտեսության ոլորտում ներգրավված անձանց հետ: Հետազոտության ընտրանքում ներառված են գյուղատնտեսությամբ զբաղվողներ՝ ձեռնարկատերեր, ֆերմերներ, հողագործներ և այլն:

Սույն զեկույցում ամփոփված են ուսումնասիրության արդյունքները:

Զեկույցում ներկայացվում է իրականացված ուսումնասիրության մեթոդաբանությունը, հետազոտության հիմնական բացահայտումները, քանակական և որակական ամփոփը, միջազգային փորձագետի առաջակությունները:

### *Հեղազոտության նպատակը.*

Բացահայտել գյուղատնտեսությունում առավել հաճախ կիրառվող թունաքիմիկատների տեսակները, մասնավորապես՝ մոլախոտերի և վնասատուների դեմ պայքարի միջոցները, դրանց ձեռքբերման եղանակները և օտագործման ընթացքում անվտանգության նորմերի պահպանումը:

### *Խնդիրները*

- ՀՀ-ում գյուղատնտեսության համար առավել բարենպաստ համայնքներում բացահայտել հողի մշակման նպատակով կիրառվող թունաքիմիկատների տեսակները:
- Պարզել անհատների և ձեռնակատերերի իրազեկվածության մակարդակը թունաքիմիկատների տեսակների և դրանց օգտագործման կանոնների վերաբերյալ:
- Պարզել թունաքիմիկատների ձեռքբերման հիմնական ուղիները:

### ***Մեթոդաբանությունը***

Ուսումնասիրությունն իրականացվել է սոցիոլոգիական հետազոտությունների քանակական մեթոդաբանությամբ: Հետազոտական գործիք է հանդիսացել հարցաթերթը՝ բաղկացած 15 հարցից: Հետազոտության արդյունքները վերլուծելիս՝ տոկոսային արտահայտություն ստացած մեծությունները կլորացվել են մինչև տասնորդական:

Ուսումնասիրությունն իրականացվել է սոցիոլոգիական հետազոտությունների քանակական մեթոդաբանությամբ՝ կիրառելով **հարցաթերթ**:


Ընտրանքում ներառվել են 450 հարցվողներ ՀՀ 7 մարզերից:

<b>Արագածոտն</b>	50
<b>Արարատ</b>	100
<b>Արմավիր</b>	50
<b>Գեղարքունիք</b>	110
<b>Լոռի</b>	50
<b>Կոտայք</b>	50
<b>Շիրակ</b>	40
<b>Ընդամենը</b>	<b>450</b>

Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ 7 մարզերում՝ Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ: Քանակական հետազոտությամբ հավաքագրված տեղեկատվությունը համալրվել է որակական հարցազրույցների արդյունքներով: Որակական խորին հարցազրույցներ են իրականացվել ուսումնասիրության մեջ ներառված մարզերի այն համայնքներում, որտեղ իրականացվում է ակտիվ գյուղատնտեսություն:

Քանակական հետազոտության հարցվողների 54%-ը եղել են կանայք, իսկ 46%-ը՝ տղամարդիկ:


Հարցվողների բաշխումն ըստ սեռերի ներկայացված է Գծապատկեր 1-ում:



Հարցվողների բաշխումն ըստ տարիքի ներկայացված է Գծապատկեր 2-ում

**Գծապատկեր 2. Հարցվողների բաշխումն ըստ տարիքի**


■ 18-29 ■ 30-39 ■ 40-49 ■ 50-59 ■ 60 և ավելի




Հարցվողների կրթության նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

**Գծապատկեր 3. Հարցվողների կրթությունը**

■ Տարրական ■ Բակալավր  
 ■ Թերի միջնակարգ ■ Մագիստրոս  
 ■ Միջնակարգ ■ Հետբուհական  
 ■ Միջին մասնագիտական ■ Հրաժարվել է պատասխանել




Հարցվողների աշխատանքի նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 4-ում:




Այն հարցին, թե հարցվողների զբաղվածությունն ինչպես է բնութագրվում գյուղատնտեսության ոլորտում, նրանց ծանրակշիռ մասը՝ 71%-ը՝ 330 մարդ, մշակում են սեփական կամ վարձու հողատարածք, 17%-ը՝ 79 մարդ, ունեն սեփական բիզնես, սակայն չունեն վարձու աշխատողներ, ինքնազբաղվածներ են, 5%-ը՝ 23 մարդ, ունեն սեփական բիզնես և վարձու աշխատողներ, 3%-ը՝ 14 մարդ, աշխատու են փոքր բիզնեսում, անհատ ձեռնարկատիրոջ մոտ կամ ընտանեկան փոքր բիզնեսում, 2%-ը՝ 9 մարդ, աշխատում են միջին կամ մեծ տեղական մասնավոր կազմակերպությունում, արտադրությունում:

Հարցվողների կողմից մշակվող մշակաբույսերի տեսակների նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 5-ում:



Հարցվողների 43%-ը՝ 273 մարդ, մշակում են բանջարաբուստանային մշակաբույսեր, 39%-ը՝ 248 մարդ, զբաղվում են այգեգործությամբ, 9%-ը՝ 57 մարդ, մշակում են ցորեն, 5%-ը՝ 32 մարդ, մշակում են այլ հացահատիկային մշակաբույսեր, և 3%-ը՝ 19 մարդ, զբաղվում են այլ մշակաբույսերի և հատապտուղների՝ օրինակ մոշի մշակմամբ:


Հարցվողների կողմից օգտագործվող հերբիցիդների տեսակների նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 6-ում:



Տվյալ առանցքային հարցադրմանը հարցվողներն ընտրել են մինչև երեք պատասխան, նրանք նշել են իրենց կողմից առավել հաճախ կամ հիմնականում օգտագործվող թունաքիմիկատի անվանումը: Հիմնականում հարցվողները չեն իմացել իրենց կողմից օգտագործվող թունաքիմիկատի անվանումը՝ նշելով, որ գնում են այն, ինչ առաջարկում է վաճառողը: 45 հարցվող նշել է "Չինկոր" անվամբ թունաքիմիկատը: Նշվել են նաև հետևյալ անվանմամբ նյութեր. "Լագուրիտ", "Մերի 505", "Լեոն", "Սուպեր Տայգա": Վերը նշված պատասխաններն, այդ թվում, չիմացողների պատասխանները,


ներառում են հարցվողների ընդհանուր թվի 42%-ը՝ 245 մարդ: 105 մարդ՝ հարցվողների 18%-ը, օգտագործում են Ամինային աղ, 64 մարդ՝ հարցվողների 11%-ը, օգտագործում են "Ռատունդ ափ", 41 մարդ՝ հարցվողների 7%-ը, օգտագործում են "Տորնադո" անվանմամբ թունաքիմիկատ: Գծապատկերում բերված մյուս անվանումներով հերբիցիդների օգտագործումը միջինում կազմում է 2%՝ 12 մարդ:

Հարցվողների կողմից օգտագործվող նյութի ընտրության դրդապատճառների նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 7-ում:



Այն հարցին, թե ինչու են ընտրում իրենց կողմից նշված թունաքիմիկատները, հարցվողների 47%-ը՝ 259 մարդ, պատասխանել են, որ գնում և օգտագործում են տվյալ նյութը՝ առավել արդյունավետ լինելու պատճառով, 23%-ը՝ 126 մարդ, ընտրում են տվյալ նյութը, քանի որ ծանոթ են դրան և չգիտեն այլ նյութերի գոյության մասին, 15%-ը՝ 82 մարդ, 11%-ը՝ 60 մարդ, նշում են, որ տվյալ նյութի օգտագործման պատճառը հիմնականում այլընտրանքի բացակայությունն է: Տվյալ հարցին պատասխանելիս ևս հնարավոր է եղել նշել մինչև երեք պատասխան:

Հարցվողների կողմից մասնագիտական խորհրդատվության դիմելու ցուցանիշների նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 8-ում:




Հարցվողների 74%-ը՝ 333 մարդ, հողի մշակման հետ կապված հարցերի դեպքում մասնագիտական խորհրդատվության չեն դիմում, իսկ նրանց 24%-ը՝ 108 մարդ, առնվազն մեկ անգամ կամ, ըստ անհրաժեշտության, դիմում է մասնագիտական խորհրդատվության:

Հարցվողների կողմից մասնագիտական խորհրդատվության դիմելու պատճառների նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 9-ում:


**Գծապատկեր 9. Հարցվողների՝ մասնագետին դիմելու հարցերը հետեյալի մասին.**

- Հողի որակի
  - Հողի մշակման
  - Մշակաբույսերի տեսակների
  - Այլ
- Հողի տեսակի
  - Բերքի,բերքատվության
  - Թունաքիմիկատների և դրանց օգտագործման
  - Հրաժարվել են պատասխանել




Վերոնշյալ հարցերին դրական պատասխանողներից 77 մարդ դիմում են խորհրդատվության՝ բերքի, բերքատվության հետ կապված խնդիրներով, 59 մարդ՝ թունաքիմիկատների, դրանց օգտագործման հետ կապված հարցերով, 36 մարդ՝ հողի մշակման հետ կապված հարցերով, 27 մարդ՝ մշակաբույսերի և դրանց տեսակների մասով, ևս 27 մարդ՝ հողի որակի մասով, 14 մարդ՝ հողի տեսակի մասով:

Հարցվողների կողմից թունաքիմիկատների ձեռքբերման աղբյուրների նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 10-ում:




Հարցվողների 78%-ը՝ 362 մարդ, թունաքիմիկատները ձեռք են բերում տեղի խանութից, 10%-ը՝ 46 մարդ, գնում են թունաքիմիկատներն անհատ մատակարարից, 5%-ը՝ 23 մարդ՝ մեճաճախ պահեստից: Հարցվողներից ոմանք անձամբ չէին գնում թունաքիմիկատն ու տեղյակ չէին:

Հարցվողների կողմից պետական որևէ ծրագրից թունաքիմիկատների ձեռքբերման նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 11-ում:



Հարցվողների 94%-ը՝ 423 մարդ, երբևէ չեն ստացել պետական որևէ ծրագրի շրջանակում թունաքիմիկատներ: 4%-ը՝ 18 մարդ, ստացել են հետևյալ տեսակի թունաքիմիկատներ. "Ջինկոր", "Ֆիտոֆտորա":

Հարցվողների կողմից թունաքիմիկատների օգտագործման պայմանների մասին տեղեկացվածության աղբյուրների նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 12-ում:




Այն հարցին, թե հարցվողները որտեղից կամ ումից են տեղեկանում թունաքիմիկատների օգտագործման կարգի, ձևի, չափի մասին, ունենալով երեք պատասխան նշելու հնարավորություն, պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. վաճառողից՝ 345 պատասխան, 77՝ հարևանից կամ բարեկամից, 73՝ համացանցից, 69՝ մասնագետից, 14՝ ոչ որից, 10՝ այլ պատասխաններ, որոնց թվում՝ թունաքիմիկատի փաթեթավորման նկարագրությունից:

Հարցվողների կողմից թունաքիմիկատների կիրառման ընթացքում անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման նկարագրությունը ներկայացված է Գծապատկեր 13-ում:


**Գծապատկեր 13. Հարցվողների կողմից թունաքիմիկատների կիրառման ընթացքում անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման ցուցանիշները**

■ Ձեռնոց   ■ Համազգեստ   ■ Հատուկ դիմակ   ■ Այլ   ■ Ոչինչ   ■ Հրաժարվել է պատասխանել



Թունաքիմիկատների կիրառման ընթացքում հարցվողներն օգտագործում են անհատական պաշտպանիչ միջոցներ. ձեռնոց՝ 332 պատասխան, դիմակ՝ 269 պատասխան, համազգեստ(այլ հագուստ)՝ 103 պատասխան, 48՝ այլ պարագիներ (գլխարկ, ակնոց, ռետինե կոշիկ), 32 մարդ՝ հարցվողների 4%-ը, ոչ մի պաշտպանիչ միջոց չի օգտագործում թունաքիմիկատների հետ աշխատելիս: Հարցվողները տվյալ հարցին պատասխանելիս՝ նշել են մինչև երեք տարբերակ:

Հարցվողների կողմից բերքի պահպանման նպատակով օգտագործվող նյութերի ցուցանիշները ներկայացված է Գծապատկեր 14-ում:



Հարցվողները, բերքի պահպանման համար օգտագործվող նյութերի տեսակների մասին հարցին, նշել են մինչև երեք պատասխան: Առաջարկվող պատասխանների մասով բաշխվածությունը հետյալն է. "Ագրոֆոսսուպեր" 149 պատասխան, "Քիմիկատներ" 37 պատասխան, "Մուպերքեյր" 15 պատասխան, "Զալյ" 11 պատասխան, "Գոմբո-350" 5 պատասխան, 96 մարդ՝ ոչ մի նյութ չի օգտագործում բերքի պահպանման համար, այլ պատասխաններ՝ 207: Այլ պատասխանների շարքում ներկայացված են նյութերի և պատասխանների թվի հետևյալ համամասնությունները. "Անտրոկոլ" 27, "Յիպեր" 21, "Կառարե" 22, "Յ 58" 18, "Տոպագ" 25, "Բելտ" 21, "Ավեո" 18, "Պրոկլեին" 61, "Նուրիդե" 29, "Կոնֆիդոր" 27, "Ռոդոմին" 31, "Ագրոֆոս 550" 11, "Կապույտ շիբ" 11 և այլն (մինչև 10 պատասխան):

## **Ընդհանուր իրավիճակ՝**

Գյուղատնտեսությունն առանցքային դեր է խաղում Հայաստանի տնտեսական և սոցիալական կյանքում: Հանդիսանալով կենսաապահովող ոլորտ, ռազմավարական նշանակություն ունի երկրի համար: 2019-20թթ. Հայաստանի բնակչության շուրջ 37% -ը բնակվում է գյուղական վայրերում, իսկ ընդհանուր աշխատուժի 1/3-ն ընդգրկված էր գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսական արտադրանքին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 14.6% -ը: Հատկանշական է նաև գյուղատնտեսության ներդրումը արտաքին առևտրում ընդհանուր արտահանման 28%, ներմուծման՝ 18% -ը:

Աշխատանքի անվտանգության և աշխատանքային պայմանների տեսանկյունից գյուղատնտեսությունում առկա են մի շարք առանձնահատկություններ՝ ոչ ֆորմալ աշխատանք՝ ինքնազբաղվածներ, չգրանցված աշխատողներ: Կարճաժամկետ /սեզոնային/ աշխատանքային հարաբերություններ: Ոլորտային վերահսկողության բացեր, չնորմավորված գրաֆիկ կյանքի, առողջության համար վտանգավոր և վնասակար պայմաններ սոցիալական երաշխիքների բացակայություն: Այս ամենին գումարվում է թունաքիմիկատների հետ աշխատանքը, դաշտային աշխատանքը՝ կիզիչ արևի տակ, հաճախ առանց ջրի հասանելիության պայմաններում:

## **Սույն հետազոտության հիմնական բացահայտումներն են՝**

1. Հայաստանի Հանրապետությունում հարցվողների մեծամասնությունը՝ այգեգործությամբ և բանջարաբուստանային կուլտուրաներ մշակող օգտագործում են ագրոքիմիկատներ, որոնք պարունակում են Գլիֆոսատ, ինչպես նաև դրանց կիրառման ընթացքում չեն պահպանվում օգտագործման և աշխատանքի անվտանգության կանոնները:

Գլիֆոսատը շատ է օգտագործվում գյուղատնտեսության ոլորտում մոլախոտերի, անցանկալի բույսերի աճը կանխելու և դրանք վերացնելու նպատակով: Այն շատ արդյունավետ է և հենց դա է պատճառը, որ կարճ ժամանակահատվածում ստացավ լայն տարածում ամբողջ աշխարհում: Գլիֆոսատը ընկած է բազմաթիվ հերբիցիդների հիմքում, որպես հիմնական ներգործող նյութ: Հայաստանում դրանք վաճառվում են հետևյալ անվանումներով՝ Ռաունդ ափ, տոռնադո, չիստոգրյադ, ֆայթեր, թայֆուն, նապալմ, լիկվիդատոր, զեվս, այլ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը տարիներ շարունակ նախազգուշացնում է, որ այս հերբիցիդը կուտակվում է օրգանիզմի բջիջներում և քաղցկեղածին է: Հասնելով որոշակի բաղադրության կամ քանակի՝ այն առաջացնում է փոփոխություններ բջիջներում և հյուսվածքներում, որը անդառնալի գործընթաց է: Այն սպանում է առողջ բջիջները, կամ ենթարկում է դրանք պաթոլոգիկ ձևափոխումների: Հաշվի առնելով բազմաթիվ հետազոտություններ Եվրոպայի մի շարք երկրներ արգելել կամ սահմանափակել են գյուղատնտեսությունում Գլիֆոսատի օգտագործումը: Հարցվողների մեծամասնությունը տեղեկացված չեն իրենց կողմից օգտագործվող թունաքիմիկատների վնասակարության մասին, չեն դիմում մասնագետի խորհրդատվությանը և հիմնականում չեն պահպանում կամ թերի են պահպանում անվտանգության կանոնները: Չեն պահանջում նաև ագրոքիմիկատների օգտագործման չափաբաժինները, պահեստավորման և պահպանման կանոնները: Հատկանշական է, որ հարցվողների կրթությունը կապված չէ այս

ուրրտում իրազեկվածության մակարդակի հետ: Մեծամասամբ ագրոքիմիկատները ձեռք են բերվում տեղի խանութից և հաճախ չեն պահպանվում պիտակների վրայի ցուցումները, այլ խանութի վաճառողի /հաճախ ոչ մասնագետ/ ցումների համապատասխան են օգտագործվում:

Այս իրավիճակը կարող է հանգեցնել թե մասնագիտական հիվանդությունների, թե սննդամթերքի անվտանգության հետ կապված խնդիրների ավելացմանը, ինչպես նաև հողերի որակի կտրուկ վատթարացմանը, իր հեռահար հետևանքներով:

## **Մոլախոտերից բույսերի պաշտպանության համար գլիֆոսատի կիրառման կարգավորման ոլորտում միջազգային պրակտիկա**

Եվրոպայում գլիֆոսատի օգտագործումը ամբողջությամբ արգելելու համար պայքարի պատմությունը սկսվեց քաղաքացիական նախաձեռնության ակտիվ դրսևորմամբ և այս հարթակում ԵՄ անդամ 22 երկրների քաղաքացիների ստորագրահավաքով: Լիսաբոնյան պայմանագրով ներդրված Քաղաքացիների նախաձեռնությունը ԵՄ անդամ երկրների առնվազն մեկ քառորդի՝ 1 միլիոն քաղաքացիների թույլ է տալիս պահանջել Եվրոպական հանձնաժողովից օրենսդրության առաջարկում իր իրավասության ներքո գտնվող ոլորտների վերաբերյալ:

2017 թվականին Քաղաքացիական նախաձեռնությունը հավաքել է ընդհանուր առմամբ 1,070,865 հայտարարություն, որոնք կոչ են անում Հանձնաժողովին առաջարկել ԵՄ անդամ երկրներին.

1. Արգելել Գլիֆոսատի վրա հիմնված թունաքիմիկատների օգտագործումը, քանի որ հիմքեր կան ենթադրելու, որ դրա ազդեցությունը կարող է քաղցկեղ առաջացնել մարդկանց մոտ և նպաստել էկոհամակարգի վատթարացմանը

2. Ապահովել, որ թունաքիմիկատների վերաբերյալ գիտական գնահատումը հիմնված լինի բացառապես իրավասու պետական մարմինների կողմից նախաձեռնված հրապարակված հետազոտությունների վրա, այլ ոչ թե քիմիական արդյունաբերության կողմից նախաձեռնված

3. Սահմանել երկրների կողմից հստակ պարտավորություններ, նվազեցնելու համար թունաքիմիկատների օգտագործումը ԵՄ ողջ տարածքում՝ ժամանակի ընթացքում թունաքիմիկատներից զերծ ապագայի հասնելու համար:

Եվրոպական հանրության այս պահանջները բուռն քննարկման առարկա դարձան ԵՄ կառույցներում և հանրային լուսմների ժամանակ նրանք արժանացան քննարկումներում ներգրավված շահագրգիռ կողմերի ոչ միանշանակ գնահատականին: Այն ժամանակ, Եվրահանձնաժողովը գտնում էր, որ գլիֆոսատի արգելքը հիմնավորող գիտական կամ իրավական հիմքեր չկան, ուստի համապատասխան օրենսդրական առաջարկ չի ներկայացնի Եվրախորհրդարանին: Մասնավորապես, Հանձնաժողովի եզրակացության մեջ ասվում է, որ գիտական ապացույցները չեն հաստատում այն եզրակացությունը, որ գլիֆոսատը քաղցկեղածին է: Այսպիսով, Հանձնաժողովի որոշումը՝ երկարաձգել գլիֆոսատի հաստատումը (5 տարով) լիովին արդարացված է: Սա Եվրոպացի պաշտոնյաների պատասխանն էր ԵՄ 22 երկրների ավելի քան մեկ միլիոն քաղաքացիների

մտավախություններին: Ճիշտ է, Հանձնաժողովը խոստացել էր, որ կվերագնահատի իրավիճակը և համապատասխան հաշվետվություն կներկայացնի մինչև 2019թ.

Մոլախտերի դեմ մշակաբույսերի պաշտպանության համար գլխֆոսատի հաստատման նորացումից հետո հինգ տարվա ընթացքում զգալի տեղաշարժեր են տեղի ունեցել ինչպես Եվրոպայում, այնպես էլ աշխարհում՝ ուժեղացնելու պայքարն այս թունաքիմիկատի և դրա ածանցյալների դեմ:

Մասնավորապես, աշխարհում թունաքիմիկատների խոշորագույն արտադրողներից մեկի՝ Monsanto-ի արդյունաբերական գործունեությունը հայտնվել է բնապահպանների և կենսաբանների ուշադրության կենտրոնում: Նման արտադրանքներից մեկը՝ RoundUp կոչվող հերբիցիդը, լայն քննադատության է արժանացել ակտիվիստների և գիտական հանրության մեծ մասի կողմից, որը ենթադրաբար պարունակում է քաղցկեղ խթանող գլխֆոսատ նյութը: Կենսաբանները պարզեցին, որ այս նյութի միասնությունները աստիճանաբար կուտակվում են մարդու օրգանիզմում, և կոչ արեցին այն հավասարեցնել DDT նյութին և արգելել դրա արտադրությունն ամբողջ աշխարհում:

2018 թվականին Սան Ֆրանցիսկոյի դաշնային դատարանում ԱՄՆ երդվյալ ատենակալները միաձայն ընդունեցին, որ RoundUp կոչվող թունաքիմիկատը «զգալի գործոն» էր յոթանասունամյա ֆերմեր Էդվին Գարդեմանի մոտ քաղցկեղի առաջացման հարցում: Նա օգտագործել է տվյալ քիմիական նյութը ավելի քան երեսուն տարվա ընթացքում, ում մոտ զարգացել է Ոչ հոջկինյան լիմֆոմա<sup>1</sup>: Դատարանը արտադրող ընկերությանը պարտադրել է վճարել մոտ 80 մլն դոլարի չափով փոխհատուցում :

Ընդհանուր առմամբ, քիմիական կոնցեննի դեմ ավելի քան 11200 հայց է ներկայացվել ԱՄՆ դատարաններին: Ըստ Bloomberg գործակալության, երկրի ավելի քան հիսուն շրջաններ և քաղաքներ սահմանել են մորատորիում թունաքիմիկատի վերաբերյալ:

Բնապահպանները նաև ապացույցներ են գտել, որ գլխֆոսատը՝ Մոնստանտոյի թունաքիմիկատների հիմնական բաղադրիչը, մեղունների և այլ փոշոտիչների զանգվածային մահեր է առաջացնում: Նրանց բացահայտումները ներկայացվել են PNAS ամսագրում:

Գլխֆոսատի առողջության վրա ազդեցությունն ուսումնասիրելու համար նույն ժամանակահատվածում Եվրոպայում ստեղծվել է հատուկ Գլխֆոսատի գնահատման խումբ (AGG), որը ներառում է Հունգարիայի, Նիդեռլանդների, Ֆրանսիայի և Շվեդիայի ազգային իշխանությունները:

2021 թվականի աշնանը Քիմիական նյութերի եվրոպական գործակալությունը (ECHA)<sup>2</sup> և Մենդի անվտանգության եվրոպական մարմինը (EFSA) զուգահեռ խորհրդակցություններ են սկսել գլխֆոսատի նախնական գիտական գնահատումների վերաբերյալ:

<sup>1</sup> Լիմֆոմաներ՝ չարորակ ուռուցքներ, որոնք առաջանում են լիմֆոցիտներից

<sup>2</sup> ECHA-ն գործակալություն է, որը զբաղվում է քիմիական նյութերի մասին օրենսդրության կիրարկմամբ՝ ուղղված մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Գործակալությունը նպատակ

EFSA-ի և ECHA-ի կողմից անցկացվող զուգահեռ խորհրդակցությունները գլխոսատի վերաբերյալ ավարտվել են 2021 թվականի նոյեմբերի 22-ին: Երկամսյա խորհրդակցությունների ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերին հասանելի են դարձել Հունգարիայի, Ֆրանսիայի, Նիդեռլանդների և Շվեդիայի ազգային իշխանությունների կողմից պատրաստված գիտական գնահատումները, որոնք հայտնի են որպես Գլխոսատի գնահատման խումբ (AGG): Խորհրդակցությունների ընթացքում ընդհանուր առմամբ ստացվել է 416 դիմում ԵՄ և ԵՄ անդամ չհանդիսացող երկրներից, որոնց մեծ մասը՝ Արգենտինայից է եղել:

Խորհրդակցության ընթացքում ստացված դիտողություններն ու դիտարկումներն ուղարկվել են AGG-ին, որը կուսումնասիրի և կպատասխանի դրանց:

Դասակարգման գործընթացի համար AGG-ն իր պատասխանները կտրամադրի ECHA ռիսկի գնահատման կոմիտեին (RAC): Իր հերթին RAC-ը կմշակի իր կարծիքը գլխոսատի դասակարգման վերաբերյալ՝ Դասակարգման, պիտակավորման և փաթեթավորման կանոնակարգի (CLP) համաձայն: Ակնկալվում է, որ դա տեղի կունենա 2022 թվականի մայիս/հունիս ամիսներին: Այնուհետև AGG-ն կպատրաստի թարմացված գնահատում (RAR) և այն կուղարկի EFSA՝ փորձագիտական գնահատմանը: EFSA-ն իր փորձագիտական գնահատման ընթացքում հաշվի կառնի ECHA-ի եզրակացության արդյունքները, որը նախատեսվում է ավարտել 2022 թվականի երկրորդ կեսին:

Ինչպես տեսնում եք, գլխոսատի ճակատագրի վերջնական որոշման ճանապարհը երկար է և անհարթ: Մինևույն ժամանակ, որոշ եվրոպական երկրներ որոշեցին ինքնուրույն հասկանալ այս հարցը և ընդունել իրենց ներքին կարգավորող ակտերը, որոնք սահմանափակում կամ արգելում են այս թունաքիմիկատի օգտագործումը:

**Լյուքսեմբուրգը** որոշել է դառնալ Եվրամիության առաջին երկիրը, որն իր տարածքում արգելել է գլխոսատը: Կառավարության որոշմամբ այս թունաքիմիկատն ամբողջությամբ արգելվել է մինչև 2020 թվականի վերջ: Արգելի գործընթացն անցել է երեք փուլով՝ վաճառքի թույլտվության չեղարկում մինչև 2020 թվականի փետրվարի 1-ը, պաշարների վաճառքի վերջնաժամկետը մինչև հունիսի 30-ը, այնուհետև ապրանքների օգտագործման համար արտոնյալ ժամկետ՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Այսպիսով՝ ֆերմերները, ովքեր 2019/20 գյուղատնտեսական տարվանից դադարել են օգտագործել գլխոսատի վրա հիմնված մշակաբույսերի պաշտպանության միջոցները, Կանաչապատման և Լանդշաֆտի Կառավարման ծրագրի շրջանակներում ստացել են փոխհատուցում:

Այս պայմանը կատարած ֆերմերները հավելյալ փոխհատուցում են ստացել մեկ հեկտարի համար՝ 30 եվրո վարելահողերի, 50 եվրո խաղողի այգիների և 100 եվրո պտղաբուծության համար:

Բացի այդ, իրենց խաղողի այգիներում թունաքիմիկատների օգտագործումից կամովին հրաժարված ֆերմերները ստացել են փոխհատուցում 500-ից մինչև 550 եվրոյի չափով մեկ հեկտարի համար՝ կախված հողի թեքությունից:

Լյուքսեմբուրգը հույս ունի «զգալի ազդեցություն ունենալ ողջ Եվրամիության վրա»:

Նաև **Ավստրիայի խորհրդարանը** հավանություն տվեց օրենքի փոփոխությանը, որն ամբողջությամբ արգելում է երկրում գլխոսատի օգտագործումը, ինչը կարող է Ավստրիան դարձնել

---

ունի նաև խթանել ներքին շուկայի, նորարարության և եվրոպական քիմիական արդյունաբերության մրցունակության բարելավումը:

Եվրամիության առաջին երկիրը, որն արգելում է վիճելի թունաքիմիկատը «նախազգուշական սկզբունքի» անվան տակ: Գյուղատնտեսության մեջ գլխֆոսատի օգտագործման կողմնակիցները կարծում են, որ արգելքը հակասում է եվրոպական կանոնակարգերին, քանի որ ԵՄ-ում գործում է գլխֆոսատի օգտագործման արտոնագիր, որը երկարաձգվել է եվրոպական գործադիր կողմից 2017 թվականին և ուժի մեջ է մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսը:

Թեև Ավստրիայում գլխֆոսատի արգելքը պետք է ուժի մեջ մտներ 2020 թվականի հունվարի 1-ից, երկրի կանցլերը հայտարարեց, որ չի ստորագրի արգելքի վերաբերյալ օրենքը՝ վկայակոչելով ինչ որ ֆորմալ պատճառներ: Առայժմ արգելքի հարցը հետաձգվել է:

**Գերմանիան** 2020 թվականից արդեն սկսել է համակարգված կերպով նվազեցնել գլխֆոսատ պարունակող թունաքիմիկատների օգտագործումը, իսկ 2024 թվականից ամբողջությամբ արգելելու է դրա օգտագործումը գյուղատնտեսության մեջ: «Bayer» ընկերությունը հայտարարում է, որ համաձայն չէ Գերմանիայի կառավարության որոշման հետ. «Այս արգելքը անտեսում է ողջ աշխարհի իրավասու մարմինների գիտական գնահատականները, որոնք ավելի քան 40 տարի պնդում են, որ գլխֆոսատը անվտանգ է օգտագործման համար»:

**Դանիայի** միջավայրի պաշտպանության մարմինը գլխֆոսատը հայտարարել է քաղցկեղածին և խորհուրդ է տվել անցնել ավելի քիչ թունավոր քիմիական նյութերի: Օլբորգը՝ Դանիայի խոշորագույն քաղաքներից մեկը, 2017 թվականի սեպտեմբերին արգելեց գլխֆոսատի մասնավոր նպատակներով օգտագործումը: 2018 թվականի հուլիսին Դանիայի կառավարությունը նոր կանոնակարգեր մտցրեց արգելելու գլխֆոսատի օգտագործումը բոլոր մշակաբույսերի վրա՝ կանխելու մնացորդների ներթափանցումը սննդամթերք:

**Ֆրանսիայի** իշխանություններն 2019 թվականի սկզբին արգելել են RoundUp տեսակի թունաքիմիկատի վաճառքը, տարածումը և օգտագործումը: 2019 թվականի մայիսին Ֆրանսիայի գյուղատնտեսության նախարար Դիդյե Գիյոնը հայտարարեց, որ Ֆրանսիան, որոշ բացառություններով, աստիճանաբար կիրաժարվի գլխֆոսատից մինչև 2021 թվականը:

Երկրի շուրջ 20 քաղաքայետեր իրենց քաղաքաներում արգելել են գլխֆոսատը:

Նախագահ Մակրոնը 2020 թվականի դեկտեմբերին հայտարարեց, որ կառավարությունը ֆինանսական օգնություն կառաջարկի ֆերմերներին, ովքեր կհամաձայնեն աստիճանաբար դադարեցնել գլխֆոսատի օգտագործումը: Լրատվամիջոցներին տված հարցազրույցում Ֆրանսիայի նախագահն ասել է, որ թեև ինքը դեռ պաշտպանում է գլխֆոսատի արգելքը, սակայն ընդունում է, որ մինչև 2021 թվականը չի կարողանա նախաձեռնել արգելքի ընդունումը:

2019 թվականի դեկտեմբերին ֆրանսիական ANCES գործակալությունը որոշեց, որ գլխֆոսատի վրա հիմնված 36 արտադրանք կհանվեն շուկայից և այլևս չեն թույլատրվի օգտագործել:

**Հունաստանը** ԵՄ ինը երկրներից մեկն էր, որը դեռ քվեարկեց 2017 թվականի նոյեմբերին գլխֆոսատի վերալիցենզավորմանը: Երկիրը նաև ԵՄ անդամ վեց երկրներից մեկն էր, որը 2018 թվականին ստորագրեց նամակ Եվրահանձնաժողովին, որում կոչ էր անում «մշակել գլխֆոսատի վերացման ծրագիր...»: Հունաստանի գյուղատնտեսության զարգացման նախարար Էվանգելոս Ապոստոլուի խոսքով՝ «մեր պարտքն է նպաստել դիսկերի կառավարմանը՝ ի շահ սպառողների, արտադրողների և շրջակա միջավայրի»: Այնուամենայնիվ, 2018 թվականի մարտին Հունաստանի կառավարությունը հավանություն տվեց Monsanto ընկերության RoundUp կոչվող արտադրանքի հնգամյա լիցենզիային՝ ի հեճուկս հույն բնապահպանների ցանկությանը:

**Իտալիայի** առողջապահության նախարարությունը մի շարք սահմանափակումներ է մտցրել գլիֆոսատի օգտագործման վերաբերյալ: Իտալացի օրենսդիրները նույնպես մտահոգություն են հայտնել գլիֆոսատի անվտանգության վերաբերյալ և դեմ են արտահայտվել Եվրոպական միությունում թունաքիմիկատի վերալիցենզավորմանը: 2016 թվականին Իտալիայի կառավարությունն արգելեց գլիֆոսատի օգտագործումը որպես բերքահավաքից առաջ կիրառվող միջոց և սահմանափակումներ մտցրեց մարդաշատ վայրերում գլիֆոսատի օգտագործման վրա: 2017 թվականի նոյեմբերին Իտալիան դարձավ ԵՄ յոթ երկրներից մեկը, որը դեմ քվեարկեց գլիֆոսատի վերալիցենզավորմանը:

2019 թվականի հուլիսին **Մալթան** արգելեց գլիֆոսատի օգտագործումը հասարակական վայրերում: Արգելվելու է գլիֆոսատի կիրառումը սպրեյ եղանակով, մասնավորապես ճանապարհների եզրերին և դպրոցների մոտակայքում:

**Պորտուգալիան** նույնպես արգելել է գլիֆոսատի օգտագործումը բոլոր հասարակական վայրերում: Պորտուգալիայի բժիշկների ասոցիացիայի նախագահը նաև կոչ է արել ամբողջությամբ արգելել գլիֆոսատի օգտագործումը:

**Իսպանիա.** Բարսելոնան, Մադրիդը, Սարագոսան և Էստրեմուրա շրջանը որոշել են արգելել գլիֆոսատը, հայտնում է իսպանական Ecologistas en Acción ՀԿ-ի նախագահ Կիստինյե Գարսիան: Լա Ռիոխայի շրջանը (Իսպանիայի հիմնական գինեգործական շրջանը) և Արագոնը նույնպես հավանություն են տվել առաջարկներին ընդդեմ էնդոկրին համակարգը խաթարող քիմիական նյութերի, ինչպիսին է գլիֆոսատը:

Շվեդիան նույնպես մտահոգություն է հայտնել գլիֆոսատի անվտանգության վերաբերյալ և դեմ է արտահայտվել ԵՄ-ում թունաքիմիկատի վերալիցենզավորմանը: 2017 թվականին Շվեդիայի քիմիական գործակալությունը (SCA) հայտարարեց բույսերի պաշտպանության միջոցների մասնավոր օգտագործման կանոնակարգերը խստացնելու ծրագրերի մասին: Ծրագրի համաձայն՝ մասնավոր օգտատերերին կթույլատրվի օգտագործել միայն «ցածր ռիսկային նյութեր» պարունակող ապրանքներ: Ըստ SCA-ի, գլիֆոսատը ակտիվ նյութի օրինակ է, որը չի ակնկալվում, որ ներառվի որպես ցածր ռիսկային նյութ, ինչը նշանակում է, որ ժամանակի ընթացքում մասնավոր սպառողներին կարող է արգելվել օգտագործել գլիֆոսատ պարունակող թունաքիմիկատներ:

**Մեծ Բրիտանիա.** 2018 թվականի օգոստոսի 10-ին Monsanto-ի նկատմամբ 289 միլիոն դոլար արժողությամբ RoundUp-ի գործով վճռորոշ դատավճռից հետո Homebase-ը, որը բրիտանական DIY խոշորագույն մանրածախ վաճառողներից մեկն է, հայտարարել է, որ կվերանայի RoundUp-ի և Ranger Pro-ի վաճառքը: Այնուամենայնիվ, ըստ Sun պարբերականի, Homebase-ը և այլ խոշոր մանրածախ առևտրականներ դեռևս վաճառում են մոլախոտերը ոչնչացնող այս թունաքիմիկատները:

**Չեխիայի Հանրապետություն.** գյուղատնտեսության նախարար Միրոսլավ Թոմանը հայտարարել է, որ երկիրը 2019 թվականից կսահմանափակի գլիֆոսատի օգտագործումը: Մասնավորապես, Չեխիայում կարգելվի գլիֆոսատը՝ որպես մոլախոտերի ոչնչացման և չորացման միջոց:

**Շվեյցարիա.** մտահոգված լինելով հանրային առողջության համար՝ շվեյցարական Migros և Coop սուպերմարկետների ցանցերը իրենց ցուցափեղկերից հանել են գլխոսատի վրա հիմնված արտադրանքը՝ առողջության համար վտանգավոր լինելու պատճառով: 2017 թվականին Կանաչների կուսակցությունը նախաձեռնեց Շվեյցարիայում գլխոսատն արգելելու ծրագիր: Սակայն առաջարկված ծրագիրը մերժվել է Դաշնային խորհրդի՝ Շվեյցարիայի գործադիր իշխանության կողմից:

### **Առաջարկություններ՝**

1. Շարունակել աշխատանքը Աշխատանքի Միջազգային Կազմակերպության N 129 և N 184 կոնվենցիաների վավերացման ուղղությամբ:

2. Իրագեկման աշխատանքներ միջոցառումներ իրականացնել գյուղատնտեսությամբ զբաղվողների շրջանում:

3. Համագործակցելով պետական մարմինների հետ վերանայել գործող նորմատիվ ակտերը, արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

4. Կոլեկտիվ պայմանագրերում ուշադրություն դարձնել և ավելացնել աշխատանքի անվտանգությանը և թունաքիմիկատների օգտագործմանը վերաբերող կետեր:

5. Ուսումնասիրել խնդիրը և առաջարկել այլ երկրների օրինակով ստեղծել բուսասանիտարական օգտագործման ապրանքների և պարարտանյութերի սերտիֆիկացման և հաստատման պետական ծառայություն և հանձնարարել մշակել միջոցառումներ՝ պաշտպանելու գյուղատնտեսական աշխատողներին, որոնք զբաղված են բույսերը թունաքիմիկատներով և բույսերի պաշտպանության այլ միջոցների օգտագործմամբ:

6. Հրապարակել և մասնագետների և գյուղմթերք արտադրողների հետ քննարկել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող թունաքիմիկատների և ագրոքիմիկատների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում արտադրված, փորձարկված և ուժի մեջ մտած թունաքիմիկատների ռեգիստրը:

7. Ուսումնասիրել ֆինանսական և այլ խթանների հարցը գյուղատնտեսական արտադրողների համար, ովքեր բույսերի պաշտպանության նպատակով որոշել են սահմանափակել կամ ամբողջությամբ բացառել գլխոսատի և դրա ածանցյալների օգտագործումը:

8. Իրականացնել գիտահետազոտական աշխատանք՝ ուսումնասիրելու համար գլխոսատի և նրա ածանցյալների փոխարինիչները և դրանց կիրառումը գործնականում:

# **Use of chemicals to fight weed and pests in the agriculture**

## **Table of Contents**

<b>Introduction.....</b>	<b>24</b>
<b>Methodology .....</b>	<b>24</b>
<b>Survey .....</b>	<b>26</b>
<b>General situation.....</b>	<b>34</b>
<b>The main findings of this study .....</b>	<b>34</b>
<b>International practice of regulating the use of glyphosate for plant protection against weeds. .....</b>	<b>34</b>
<b>Recommendations .....</b>	

REPUBLIC OF ARMENIA  
Sociologist` Margarit Khachatryan  
National expert `Tiruhi Nazaretyan  
International expert ` Vasile Cioaric

## Introduction

In October-November 2021, the Agro-Industrial System Workers' Union conducted a sociological survey to find out the indicators of use of agrochemicals for weed control, in particular, the types of agrochemicals by their name, sources of acquisition, as well as indications of protection measures and directions during their use. The study was conducted with the people involved in the field of agriculture. The samples of the survey include those engaged in agriculture - entrepreneurs, farmers, agricultural people, etc.

This report summarizes the outcomes of the study.

This report presents the research methodology, main findings of the research, quantitative and qualitative summary, and the recommendations of the international expert.

### *Purpose of the study*

To identify the types of chemicals most commonly used in the cultivation process, in particular, for weed and pests' control, their acquisition methods, and compliance with safety standards during use.

### *Issues*

